# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 փետրվարի 2021թ. N 75-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 48-րդ ու 49-րդ կետերի և հիմք ընդունելով Դիաննա Սամվելի Ղազարյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Դիաննա Սամվելի Ղազարյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գյուղ Ջրաբեր հասցեի անշարժ գույքին (ծածկագիր՝ 07-055-0101-0006, վկայական՝ 1785813, տրված՝ 2003 թվականի հունիսի 30-ին) տրամադրել հասցե.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Ջրաբեր 4-րդ փողոց 8:

2. Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ հասցեի գրանցում կատարելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2021թ. փետրվարի 19
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 փետրվարի 2021թ. N 76-Ա

### «ՀԱՅԿ ԼՈԼՈՅԱՆ ՍԱՀԱԿԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Հայկ Լոլոյանի հայտը և վճարման անդորրագիրը՝ ***որոշում եմ.***

1.«Հայկ Լոլոյան Սահակի» անհատ ձեռնարկատիրոջը (հարկ վճարողի հաշվառման համար՝ 43180886) տալ ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություն Բյուրեղավան համայնքի քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 26 շենքի մոտ հասցեում գտնվող 6 քմ մակերեսով տարածքով առևտրի օբյեկտում՝ 2021 թվականի փետրվարի 16-ից մինչև հունիսի 30-ի համար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2021թ. փետրվարի 22
ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 փետրվարի 2021թ. N 77-Ա

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-13-րդ կետերի, 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերի, հաշվի առնելով, որ շինությունները կառուցված չեն ու չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ և հիմք ընդունելով N 22022017-07-0030 սեփականության վկայականը, շինարարական կոնստրուկցիաների տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունն ու Լիդիա Աշոտի Պողոսյանի 2021 թվականի հունվարի 26-ի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Կոտայքի մարզ համայնք Նուռնուս 21 թաղամաս 14 հասցեի անշարժ գույքը վերահասցեավորել.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Դարանի թաղամաս 1 փողոց 14:

2.Լիդիա և Համլետ Աշոտի Պողոսյաններին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Դարանի թաղամաս 1 փողոց 14 (ծածկագիր՝ 07-051-0136-0009) հասցեի բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված բնակելի նպատակային

նշանակության 113 քմ ներքին (144.5 քմ արտաքին) մակերեսով այգետնակը և 0.5 քմ ներքին (1.0 քմ արտաքին) մակերեսով օժանդակ շինությունը ճանաչել օրինական:

3.Լիդիա և Համլետ Աշոտի Պողոսյաններին՝ համայնքապետարանի 900105202213 հաշվեհամարին վճարել 158950 (մեկ հարյուր հիսունութ հազար ինը հարյուր հիսուն) դրամ՝ 144.5 քմ արտաքին մակերեսով այգետնակի օրինականացման վճար, 660 (վեց հարյուր վաթսուն) դրամ՝ 1.0 քմ արտաքին մակերեսով օժանդակ շինության օրինականացման վճար. ընդամենը՝ 159610 (մեկ հարյուր հիսունինն հազար վեց հարյուր տասը) դրամ:

4.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում Բյուրեղավանի համայնքապետարանի համապատասխան հաշվեհամարին չվճարելու դեպքում որոշումն համարվում է ուժը կորցրած:

5.Հաստատել սույն որոշման անբաժանելի մասը կազմող «Տիգրան Լևոնյան» անհատ ձեռնարկատիրոջ տված հողամասի հատակագիծը:

6. Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2021թ. փետրվարի 22
ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 փետրվարի 2021թ. N 78-Ա

### ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐ (ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ) ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 14-ի N 15-Ն որոշմամբ հաստատված կարգը և «ԷՍ ՋԻ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի 2021 թվականի փետրվարի 19-ի դիմումը, ***որոշում եմ.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքում կազմակերպել «ԷՍ ՋԻ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացրած Բյուրեղավան համայնքի Նուռնուս բնակավայրում վանակատի (օբսիդիանի) արդյունաբերական պաշարներ հայտնաբերելու նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային լսումներ (1-ին փուլ):

2. Լսումները (քննարկումները) անցկացնել 2021 թվականի մարտի 5-ին ժամը 12:00-ին, Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Մշակույթի տան շենքում. հասցեն՝ քաղաք Բյուրեղավան, Զորավար Անդրանիկի փողոց:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2021թ. փետրվարի 22
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 փետրվարի 2021թ. N 79-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերի, հիմք ընդունելով ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրն ու Մակիչ Պողոսի Ազարյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուսի այգետարածքի 8-րդ զանգվածի թիվ 3 անշարժ գույքի հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Հայմարմար թաղամաս 8-րդ փողոց 3:

2.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2021թ. փետրվարի 22
ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 փետրվարի 2021թ. N 80-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-13-րդ կետերի, 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերի, հաշվի առնելով, որ շինությունները կառուցված չեն ու չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ և հիմք ընդունելով թիվ 2813051 սեփականության վկայականը, շինարարական կոնստրուկցիաների տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունն ու Նաղյա Մխակի Լազգյանի 2021 թվականի հունվարի 27-ի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Կոտայքի մարզ Նուռնուսի այգետարածք թիվ 174 հասցեի անշարժ գույքը վերահասցեավորել.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Կոտայք թաղամաս 1 փողոց 174:

2.Նաղյա Լազգյանին և Արշալույս Ալեքսանյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Կոտայք թաղամաս 1 փողոց 174 (ծածկագիր՝ 07-051-0130-0011) հասցեի բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասում

ինքնակամ կառուցված բնակելի նպատակային նշանակության 67.14 քմ ներքին (82.51 քմ ընդհանուր արտաքին) մակերեսով այգետնակը, 1.06 քմ ներքին (1.51 քմ արտաքին) մակերեսով օժանդակ շինությունը և 1 (մեկ) ինքնակամ բացված պատուհանը ճանաչել օրինական:

3.Նադյա Լագզյանին և Արշալույս Ալեքսանյանին՝ համայնքապետարանի 900105202213 հաշվեհամարին վճարել 90761 (իննսուն հազար յոթ հարյուր վաթսունմեկ) դրամ՝ 82.51 քմ արտաքին մակերեսով այգետնակի օրինականացման վճար, 996.6 (ինը հարյուր իննսունվեց ամբողջ վեց տասնորդական) դրամ՝ 1.51 քմ արտաքին մակերեսով օժանդակ շինության օրինականացման վճար, 1100 (մեկ հազար հարյուր) դրամ՝ մեկ պատուհանի օրինականացման վճար. ընդամենը՝ 92857,6 (իննսուներկու հազար ութ հարյուր հիսունյոթ ամբողջ վեց տասնորդական) դրամ:

4.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում Բյուրեղավանի համայնքապետարանի համապատասխան հաշվեհամարին չվճարելու դեպքում որոշումն համարվում է ուժը կորցրած:

5.Հաստատել սույն որոշման անբաժանելի մասը կազմող «Սուրեն Շախյան» անհատ ձեռնարկատիրոջ տված հողամասի հատակագիծը:

6.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2021թ. փետրվարի 22
ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 փետրվարի 2021թ. N 81-Ա

### ՓԱՍՏԱՑԻ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԱԿԱԳԾԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 5-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-13-րդ կետերի, հաշվի առնելով, որ կառուցված շինությունները չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ, հատկացված 0.21 հեկտար մակերեսով հողամասից փաստացի ավել օգտագործվող 0.0211 հեկտար մակերեսով հողամասը համայնքի հողերի օգտագործման սխեմայով նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, նշված հողամասի օգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը և հիմք ընդունելով սեփականության վկայագիրն ու Էսվերա Հարությունի Հովհաննիսյանի դիմումը՝ *որոշում եմ.*

1. Ճանաչել Էսվերա Հարությունի Հովհաննիսյանի սեփականության իրավունքը իրեն սեփականության իրավունքով պատկանող 0.21 հեկտար մակերեսով հողամասից (ծածկագիր՝ 07-051-0013-0009) փաստացի ավել օգտագործվող 0.0211 հեկտար մակերեսով հողամասի նկատմամբ:

2.Էսվերա Հարությունի Հովհաննիսյանին պատկանող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս 10-րդ փողոց 1 հասցեի 0.2311 հեկտար մակերեսով

բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված բնակելի նպատակային նշանակության 27.6 քմ արտաքին (24.14 քմ ներքին) մակերեսով ցախանոցը, ընդհանուր 57.15 քմ արտաքին ու ներքին մակերեսով ծածկերը, 1.65 քմ մակերեսով պարիսպը և ինքնակամ ձևափոխված թվով 6 դռներն ու պատուհանները ճանաչել օրինական:

3.Էսվերա Հարությունի Հովհաննիսյանին՝ համայնքապետարանի 900105202213 հաշվեհամարին վճարել 73716,48 (յոթանասուներեք հազար յոթ հարյուր տասնվեց ամբողջ քառասունութ տասնորդական) դրամ՝ ընդհանուր 86.4 քմ արտաքին մակերեսով ցախանոցի, ծածկերի և պարսպի օրինականացման վճար, 8532 (ութ հազար հինգ հարյուր երեսուներկու) դրամ՝ թվով 6 ձևափոխված դռների ու պատուհանների օրինականացման վճար. ընդամենը 82248,48 (ութսուներկու հազար երկու հարյուր քառասունութ ամբողջ քառասունութ տասնորդական) դրամ:

4.Սույն որոշման 1-ին կետում նշված ընդհանուր 0.2311 հեկտար մակերեսով հողամասը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, ինչպես նաև չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք:

5.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում Բյուրեղավանի համայնքապետարանի համապատասխան հաշվեհամարին չվճարելու դեպքում որոշումն համարվում է ուժը կորցրած:

6.Հաստատել սույն որոշման անբաժանելի մասը կազմող «ԳԻՍ-ԱՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տված հողամասի հատակագիծը:

7. Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстанавливаемая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2021թ. փետրվարի 22
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 փետրվարի 2021թ. N 82-Ա

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ, ՓԱՍՏԱՑԻ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆՆ ՈՒ ՊԱՐԻՍՊԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-13-րդ և 22.1-րդ կետերի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերի, հաշվի առնելով, որ կառուցված բնակելի տունն ու պարիսպը չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ, հատկացված 0.049 հեկտար մակերեսով հողամասից փաստացի ավել օգտագործվող 0.0098 հեկտար մակերեսով հողամասը համայնքի հողերի օգտագործման սխեմայով նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, նշված հողամասի օգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը և հիմք ընդունելով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ» պետական ոչ առևտրային կազմակերպության 2021 թվականի փետրվարի 05-ին տված ԱԲ-248 արխիվային տեղեկանք, այգեգործի գրքույկը, շինարարական կոնստրուկցիաների տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունն ու Սեդա Արտավազդի Նահապետյանի դիմումը՝ *որոշում եմ.*

1. Աբովյանի շրջանի Նոռնոս այգետարածքի թիվ 14 տեղամասի թիվ 5 հասցեի անշարժ գույքը վերահասցեավորել.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Շուշան թաղամաս 14-րդ փողոց 5:

2.Ճանաչել Սեդա Արտավազդի Նահապետյանի սեփականության իրավունքը իրեն սեփականության իրավունքով պատկանող 0.049 հեկտար մակերեսով հողամասից (ծածկագիր՝ 07-051-0143-0059) փաստացի ավել օգտագործվող 0.0098 հեկտար մակերեսով հողամասի նկատմամբ:

3. Սեդա Արտավազդի Նահապետյանին պատկանող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Շուշան թաղամաս 14-րդ փողոց 5 հասցեի 0.0588 - հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված բնակելի նպատակային նշանակության 158.7 քմ արտաքին (129.2 քմ ներքին) մակերեսով բնակելի տունն ու 1.78 քմ մակերեսով պարիսպը ճանաչել օրինական:

4.Սույն որոշման 2-րդ կետում նշված ընդհանուր 0.0588 հեկտար մակերեսով հողամասը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, ինչպես նաև չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք:

5.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում Բյուրեղավանի համայնքապետարանի համապատասխան հաշվեհամարին չվճարելու դեպքում որոշումն համարվում է ուժը կորցրած:

6.Հաստատել սույն որոշման անբաժանելի մասը կազմող «ԳԻՍ-ԱՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տված հողամասի հատակագիծը:

7.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2021թ. փետրվարի 22
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 փետրվարի 2021թ. N 83-Ա

## ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ «ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանով հաստատված կարգի 7-րդ կետի և հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ավագանու 2019 թվականի հոկտեմբերի 12-ի N 45-Ա որոշումը, Կոտայքի մարզպետի 2021 թվականի փետրվարի 16-ի N 01/08.1/00976-2021 և «Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2021 թվականի փետրվարի 09-ի N 07 գրությունները՝ ***որոշում եմ.***

1.Բյուրեղավանի համայնքային «Բարեկարգում և կանաչապատում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2021 թվականի փետրվարի 24-ին կայանալիք մրցույթն անցկացնելու նպատակով ստեղծել մրցութային հանձնաժողով հետևյալ կազմով՝

հանձնաժողովի նախագահ՝

***Սևակ Տիգրանյան***, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի խորհրդական,

հանձնաժողովի քարտուղար՝

***Լիդիա Պողոսյան***, Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ,

հանձնաժողովի անդամներ՝

***Ռոբերտ Թումյան***, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի Տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության

Տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետի պաշտոնակատար,

*Հայկազ Բաղդասարյան*, համայնքի ավագանու անդամ,

*Նարինե Զաքարյան*, «Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2021թ. փետրվարի 23
ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 փետրվարի 2021թ. N 84-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերի ու հիմք ընդունելով Ժորա Արտաշի Մկրտչյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Ժորա Արտաշի Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ քաղաք Բյուրեղավան Հ. Հարոյան պողոտայի թիվ 32/74 անշարժ գույքի (վկայական՝ 2516315, ծածկագիր՝ 07-003-0020-0076) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 32/74:

2.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2021թ. փետրվարի 23
ք. Բյուրեղավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 փետրվարի 2021թ. N 85-Ա

## ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ «ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻՆ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի, Աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի 2-րդ մասի և հիմք ընդունելով 2021 թվականի փետրվարի 12-ի ծանուցումը՝ ***որոշում եմ.***

1.Բյուրեղավանի համայնքային «Բարեկարգում և կանաչապատում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արազ Վերդյանին 2021 թվականի փետրվարի 24-ից ազատել պաշտոնից:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2021թ. փետրվարի 23
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 փետրվարի 2021թ. N 86-Ա

### ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ «ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանով հաստատված կարգի 72-րդ կետի, Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետի, 91-րդ հոդվածի և 92-րդ հոդվածի 1-ին մասի ու հիմք ընդունելով մրցութային հանձնաժողովի 2021 թվականի փետրվարի 24-ի «Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելու մասին» N 04 որոշումն ու Արազ Անդրանիկի Վերդյանի 2021 թվականի փետրվարի 24-ի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Արազ Անդրանիկի Վերդյանին 2021 թվականի փետրվարի 25-ից նշանակել Բյուրեղավանի համայնքային «Բարեկարգում և կանաչապատում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր՝ հինգ տարի ժամկետով:

2. Սահմանել փորձաշրջան երեք ամիս ժամկետով:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2021թ. փետրվարի 24
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 փետրվարի 2021թ. N 87-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերի, հիմք ընդունելով ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ» պետական ոչ առևտրային կազմակերպության տված արխիվային տեղեկանքն ու Ռուզաննա Ալեքսանի Հովակիմյանի դիմումը՝ ***որոշում եմ***

1.Աբովյանի շրջանի Նուռնուսի այգետարածքի 7-րդ տեղամասի թիվ 311 անշարժ գույքի հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Կոտայք թաղամաս 2-րդ փողոց 311:

2.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2021թ. փետրվարի 24
ք. Բյուրեղավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 փետրվարի 2021թ. N 88-Ա

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետերի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 25-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 138-րդ և 139-րդ կետերի ու հիմք ընդունելով Արմեն Ալբերտի Պռազյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Արմեն Ալբերտի Պռազյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 27/92 հասցեի հասարակական կառուցապատման հողամասում (ծածկագիր՝ 07-003-0037-0029, վկայական N 27082019-07-0067) կառուցված հասարակական նպատակային նշանակության 2 (երկու) հարկանի հասարակական սպասարկման օբյեկտի համար տալ ավարտական ակտ (շահագործման թույլտվություն):

2.Արմեն Ալբերտի Պռազյանին՝ համայնքապետարանի 900105202163 հաշվեհամարին վճարել 20000 (քսան հազար) դրամ տեղական վճար՝ շահագործման թույլտվության ձևակերպման համար:

3.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2021թ. փետրվարի 24
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 փետրվարի 2021թ. N 89-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՔԱՂԱՔ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ 6 ՇԵՆՔԻ N 23 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերի ու հիմք ընդունելով Շամիր Բալաբեկի Մելիքյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Շամիր Բալաբեկի Մելիքյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ քաղաք Բյուրեղավան 6 շենքի N 23 բնակարանի (վկայական 0187280, տրված 2000 թվականի դեկտեմբերի 22-ին) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Սամվել Վարդանյան փողոց 6 շենք 23 բնակարան:

2.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2021թ. փետրվարի 25
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 փետրվարի 2021թ. N 90-Ա

### ՊԱՏՇԳԱՄԲԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածի և հիմք ընդունելով Վարդանուշ Լինների Հայրապետյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Թույլատրել Վարդանուշ Լինների Հայրապետյանին կատարելու իրեն սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ քաղաք Բյուրեղավան 2 շենքի թիվ 16 բնակարանի (վկայական՝ 0187485, տրված 2000 թվականի դեկտեմբերի 22-ին) պատշգամբի ընթացիկ նորոգում թեթև կոնստրուկցիաներով՝ առանց նախագծային փաստաթղթերի:

2.Վարդանուշ Լինների Հայրապետյանին՝ համայնքապետարանի 900105202510 հաշվեհամարին վճարել 3000 (երեք հազար) դրամ՝ ընթացիկ նորոգման թույլտվության ծառայության վճար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2021թ. փետրվարի 25
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 փետրվարի 2021թ. N 91-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի և հիմք ընդունելով Մարիետա Գևորգի Հովհաննիսյանի դիմումը՝ *որոշում եմ.*

1. Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Ջրաբեր 5-րդ փողոց 27 (ծածկագիր՝ 07-055-0212-0145, վկայական N 25012021-07-0083) հասցեի գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասում արտադրական շինություններ՝ գյուղ մթերքի (պտուղ-բանջարեղենի) սառնարան-պահեստ (կենցաղային մասով) կառուցելու նպատակով Մարիետա Գևորգի Հովհաննիսյանին տալ շինարարության թույլտվություն՝ համաձայն հաստատված նախագծի:

2. Մարիետա Գևորգի Հովհաննիսյանին՝ համայնքապետարանի 900105202247 հաշվեհամարին վճարել 15 000 (տասնհինգ հազար) դրամ՝ տեղական տուրք շինարարության թույլտվության համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2021թ. փետրվարի 26
ք. Բյուրեղավան

Ձև 3-7

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՀԱՄԱՅՆՔ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ
(ՀՀ մարզը, համայնքը)

# ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ)

N2 24 փետրվարի 2021 թ.

Կառուցապատող __Արմեն Ալբերտի Պոազյանին_(ք. Բյուրեղավան Զ. Անդրանիկի փ. 27շ.6բն. բնակիչ), հեռ.093664554 կողմից
(իրավաբանական անձի անվանումը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

կառուցված__2 (երկու) հարկանի հասարակական նպատակային նշանակության հասարակական սպասարկման օբյեկտը ,
(օբյեկտի անվանումը)

որը գտնվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 27/92 (ծածկագիր՝ 07-003-0037-0029) _հասցեում՝
(օբյեկտի տեղադրությունը, հասցեն)

համարվում է ավարտված և պատրաստ է շահագործման, որի՝

1. նախագծային փաստաթղթերը մշակվել են «ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (լիցենզիա՝ N 13389, տնօրեն՝ Ա. Անդրեասյան) կողմից.
(նախագծային կազմակերպության անվանումը օրենքով սահմանված դեպքերում՝ լիցենզիայի համարը, անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, լիցենզիայի համարը)

2. շինարարությունն սկսվել է ____ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի _ կողմից
(շինարարության թույլտվություն տվող մարմնի անվանումը)

տրված 19.12.2019 թ. N 15 շինարարության թույլտվությունների համաձայն.

3. շինարարությունն իրականացվել է ____<<Լիանի Վարդ>> ՍՊԸ-ի________ կողմից
(գլխավոր կապալառուի անվանումը)

_առկա է շինարարական կոնստրուկցիաների տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացություն_

4. օբյեկտի հիմնական ցուցանիշներն են՝ __2 (երկու) հարկանի հասարակական նպատակային նշանակության սպասարկման օբյեկտ

5. հատուկ պայմանները ____հասարակական սպասարկման օբյեկտը կառուցված է ոչ էական շեղումներով

ՀԻՄՔԵՐ՝

1) կառուցապատողի դիմումը 22_02_ 2021 թ.
2) ընդունող հանձնաժողովի ակտը 12. 02. 2021թ.
3) կատարողական փաստաթղթերի ցանկը կամ շինության տեխնիկական վիճակի մասին համապատասխանության հետազննության դրական եզրակացությունը 41 թերթ, որից 3 թերթ տեխնիկական եզրակացություն:

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավար

Հ. Բալասյան
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ. Տ. Դ. Ղանիեյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ

(ՀՀ մարզ, համայնք)

# ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

N04 26 փետրվարի 2021 թ.

Տրված է կառուցապատող Մարինեա Գևորգի Հովհաննիսյան (ք. Երևան Հ. Սահյան փողոց 106 բն. տուն), հեռ.077397393 ,vazgensed@gmail.com ին

(իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման վկայականի համարը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հասցեն, հեռախոսի համարը)

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Ջրաբեր 5-րդ փողոց 27 (ծածկագիր՝ 07-055-0212-0145) հասցեի գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասում արտադրական նպատակային նշանակության գյուղ մթերքի (պտուղ-բանջարեղենի) սառնարան-պահեստ (կենցաղային մասով) (II կատեգորիա) միջին ռիսկայնության աստիճան օբյեկտի

(օբյեկտի անվանումը, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), հակիրճ բնութագիրը, հիմնական ցուցանիշները)

կառուցման շինարարական աշխատանքների կատարման, այդ թվում (նոր կառուցման, վերակառուցման, վերականգնման, ուժեղացման և այլն) կառուցապատվող հողամասի գլխավոր հատակագծի վրա նշված ու հիմնական կառույցների ................ տեղադրման համար:

(նշվում են ոչ հիմնական կառույցների անվանումները)

1. Օբյեկտի նախագծային փաստաթղթերը՝

1) մշակվել են «Թի Էֆ Արքիթեքթս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (արտոնագիր ՃԲՅ –Ա-074) լիցենզիա 16567 կողմից.

(նախագծային փաստաթղթերի փուլը, նախագծային աշխատանքների կատարողի անվանումը, լիցենզիայի համարը)

2) ստացել է (են) . . թ. N փորձագիտական դրական եզրակացությունը (եզրակացությունները)

(նշել փորձաքննության տեսակը)

— կողմից

(նշել փորձաքննության մարմնի (մարմինների) անվանումը, լիցենզիայի համարը)

կամ

նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորագիրը՝ լիցենզիա N16567 «Թի Էֆ Արքիթեքթս»ՍՊԸ- տված երաշխավորագիր .

(նշել նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորության պայմանագրի համարը)

3) սահմանված կարգով համաձայնեցվել են իրավասու մարմնի, օրենքով սահմանված այլ շահագրգիռ մարմինների հետ: Բյուրեղավան համայնքի

(նշել մարմինների անվանումները և համաձայնեցման ժամկետները)

2. Շինարարական աշխատանքներն իրականացնել 12 ամսվա ընթացքում

(նշել շինարարության նորմատիվային տևողությունը)

Ներառյալ ավարտական ակտի տրամադրման համար ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:

2.1. Ապահովել օբյեկտի շահագործման թույլտվության ստացումը

[] ավարտական ակտի տրամադրումից------------------------ ամսվա ընթացքում

[+] ավարտական ակտի տրամադրման օրը:

Ներառյալ ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:

3. Շինարարության վարման մատյանը բաղկացած է 14 թերթից, կարված և դրոշմակնքված է Բյուրեղավանի համայնքապետարանի կողմից:

(իրավասու մարմնի անվանումը)

4. Նախագծային փաստաթղթերը փոփոխվել են (լրացվում է N 1 հավելվածի 108-րդ կետով նախատեսված դեպքերում) ____________________ կողմից

(նախագծային աշխատանքների կատարողի անվանումը, լիցենզիայի համարը)

և սահմանված կարգով համաձայնեցվել իրավասու մարմնի ____________________ և այլ

(նշել իրավասու մարմնի անվանումը)

շահագրգիռ մարմինների ____________________ հետ:

(նշել օրենքով սահմանված համաձայնեցնող մարմինների անվանումները)

5. Հատուկ պայմաններ՝

1) կառուցապատողը, նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր է հասցնելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ.

2) շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են N 1 հավելվածի 123-126-րդ կետերով սահմանված պահանջները.

3) *(լրացվում է N 1 հավելվածի 84-րդ կետով սահմանված դեպքերում)* սույն թույլտվությունը տրվել է սահմանված կարգով հաստատված «Նախագիծ» փուլի հիման վրա, որին հաջորդող «Աշխատանքային փաստաթղթեր» փուլը պետք է ապահովի հաստատված փուլով ընդունված լուծումները և աշխատանքների իրականացման հաջորդականությունը

____________________

____________________ ;

(նշվում են նախապատրաստական, հողային, շինմոնտաժային աշխատանքները և այլ աշխատանքներ)

6. *(լրացվում է N 1 հավելվածի 116-րդ կետով սահմանված դեպքերում)*
Հաշվի առնելով, որ կառուցվող օբյեկտի շինարարությունը հնարավոր չէ առանց գլխավոր հատակագծի վրա ____________________ համարների տակ նշված շենքի (շենքերի) և կամ շինության (շինությունների) ____________________ քանդման՝

(նշվում են ամբողջությամբ կամ մասամբ քանդման ենթակա օբյեկտները, դրանց հիմնական ցուցանիշները, ընդհանուր մակերեսը, հարկայնությունը, շինանյութերը և այլն)

սեփականատիրոջ (օգտագործողին) ____________________ տրված սույն

(նշվում է պետական գրանցման վկայականի համարը)

թույլտվությունը նաև քանդման թույլտվություն է:
Օբյեկտի քանդման աշխատանքներն իրականացնել նախագծային փաստաթղթերով ամրագրված հաջորդականությամբ:

7. Այլ պայմաններ <u>շինարարության ընթացքում տարածքը ցանկապատել ; տեղադրել ինֆորմացիոն վահանակ կառուցվող շինության վերաբերյալ</u> :

(նշվում են իրավական ակտերով և (կամ) պայմանագրով նախատեսված այլ պայմանները)

8. Կառուցապատողը շինարարական (քանդման, ապամոնտաժման) աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ, համաձայն N 5 հավելվածի N 2-5 ձևի, տեղեկացնում է իրավասու մարմնին:

9. Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ-տեխնիկական պահանջներին համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ____________________ Հ. ԲԱԼԱՅԱՆ

(ստորագրություն) (անունը, ազգանունը)

Կ. Տ. Դ. [illegible]
Հեռ. 022265205